չարչարուած պառաւ մի կին եկեղեցիի դռան հետ խօսում էր։ Իմ ներկայութիւնս նա չզգաց իսկ։ Թշուառութեան ուրուականը վայր էր ընկել քանդուած մի բանի նման, դաստակները աւեր կրծքին էր զարնում, դուռը համբուրում, ափերը երկարում ու խօսում, խօսում...

Արցունքներս կուլ տալով, վերադարձայ խուցը։

* * *

Այն օրը, հմտալից առաջնորդի հետ, պըտտեցինք կիսաքանդ թանգարանը եւ ման եկանք մանրանկարների ոսկեզարդ դաշտերում։

Մայր եկեղեցիի առջեւ նորից կանգ առինք մեր մտքի էական գծերը որոնելու համար եւ ցեղային հիմնական ոճի շուրջը վիճեցինք։

Դարեր առաջ, հայ ոգու սեղծագործական թափը իր գոյացման սկիզբնական կիզը նշաններն էր ստեղծած, իր բարդ լինելիութեան հիմնաքարն էր դետեղած ու այն աննշմարելի երաժշտականութիւնը, որը քարերի միջից խօսում էր մեր հոգիներին։ Ցեղային հիմնագծերը ներկայանում էին այստեղ ամբողջացած, բիւրեղացած, դերադոյն ներդաշնակութեան ձեւով։ Այստեղ մենք ապրում ենք իրական կեանքով։ Դարերը, չնայած իրենց ահաւոր դրոհին, չեն կարողացել դիմադրիկ անել մեզ, շնորհիւ այդ հրաշքին, աննենթակայ այդ բովանդակութեան, տիեզերական հիմնական մտքի այդ կառուցողական ուժին։

Ու միտքը՝ պարտադրական եւ անհրաժեշտ՝ քայլել է երկրագնդի վրայից դէպի արեւելք եւ դէպի արեւմուտք, դէպի Բիւզանդիոն, դէպի Կիեւ, Յունաստան, Ռումանիա, սլաւոնական երկիրները, Ֆրանսա, Գերմանիա, Նորվեգիա, Հոլլանտա, Անգլիա, ու այսօր ամէն տեղ հայ հանճարը ներկայ է։ Ներկայ է հայ մտքի շունչը, հայ ոգու տարերային թռիչքը, հայ դմբէթի թեւաւորուած սլացումը։

Իսկ այստեղ՝ հրաշալի ծննդի սուրբ երկրում, բացակայ ենք մենք։ Եկել ենք օտար պատմաբանների գրքերը մեր ձեռքին եւ դարմացած դիտում ենք։ Շոյում ենք մեր ինքնասիրութիւնը, մխիթարութիւն ենք փնտռում։ «Տօ՛, մեր Համոն մարդ է եղել մենք չգիտէինք։ Խաչքարները որ փչրում տանում էինք ախոռ չինելու համար՝ հին քար ա՝ արժէք ունին եղել»... Տե՛ս բանը ինչին է հասել, որ կոտրած սիւնի վրայ գիրք են գրում»։

Հայ ուղեղի մէջ սողալով ներս է մտել իմաստակութեան եւ առաջադիմութեան որդը։ Ամէն ինչ հարթել եւ սպաննել է։ Գիւղացուց սկսած մինչեւ վարժապետը, մինչեւ համալսարանականը, մինչեւ կաթողիկոսը՝ խաչքարերով ախոռ են չինել, աւրել ու քանդել են յանուն «դիտութեան» եւ «քաղաքակրթութեան» ու այսօր յանուն քաղաքականութեան։ Աղաւաղել են հայ ոգու կեցուածքը, խորտակել նրա հիմնական չեշտը, թաղել նրա էական իմաստը։

Հայ մակերեսային իմացականութեան մէջ նստած այդ մոնղոլը յարձակուել է բոլոր արժէքների վրայ, սրբապղծել է գաղտնիքը եւ խորհուրդը, տակնուվրայ է արել հոգեկան ատաղձը։ Ահա՛, նա ներկայ է եւ այստեղ։ Եկեղեցին մեծցնելու պատրուակով նա քանդել է եռեւի կողմը եւ այստեղ, Արարատի առջեւ, հնադարեան եւ հիմնական այդ ոճի գծաւորումներին նա կպցրել է իտալական վերածննդեան ճարտարապետութեան մի արտառոց մաս։ Եկեղեցիի դիմաց նա չինել է կեղծ հայկական ոճով գրադարանի մի շէնք եւ խուցեր՝ վարդապետների համար։ Միշտ նոյն մտայնութիւնը։ Այն, որ Սասունցի Դաւիթը կանոնաւոր ոտանաւորի է վեր ածել, այն, որ ժողովրդական միամիտ պատկերները առնելով կեղծ ազգային բանաստեղծութիւններ է չինել. այն, որ բայաթիները եւ գուլանի երգերը, երկու մատով, դաշնամուրի վրայ է նուագում. այն, որ հայկական ոճը բաց նամակների վրայ տպուած գունաւոր եւ ժան լուսանկարների է ենթարկել. այն, որ սաղի վրայ եւրոպական քայլերգ եւ բոմանս է փորձում. այն, որ հայ երկաթագիրները, պարբերականների վրայ, խառնում է քառասուն տարի ադաջ Եւրոպան հալածող "nouveau stlye"ի հետ— այն, որ զանազան «Գեղունիների» մէջ, իտալական, փողոցները վազող ժանտութիւնները զուգում է հայ պատմութեան հետ, արեւմտեան ճաշակ տարածելու պատրուակով եւ Կիօզայի կարմրաթոյր կանանց ձեռքին ոչ մի բան չլուսաւորող ջահ դնում. ու, վերջապէս, այն, որ ամէն տեղ Արարատ է նկարում ու Արագածը պըղծում, կարծելով ,որ ուր ոչիլ, տգիտութիւն

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան